

վիճակը տարտամ է, եթէ շատ կեն-
սական խնդիրներ կը յուզին և կիսու
կատար կըմնան, եթէ փոքրիկ մարդիկ
և փոքրիկ կիթեր մեծամեծ խոչընդոտ
ներ կը յարուցանեն, այս նշան է, որ
մեր ազգը մեծ մասամբ տգէտ է, և
գիտնոց շատերուն հմտութիւնն եւս
հիմնուած է սուտ գիտութեան փոյ,
որ զմարդ կը հպարտացնի: և իւր եղ-
բորէն և ազգի շահէն կը բաժնէ, և
ոչ թէ Պարսկց և Սկոթ վրայ, որ կը
յօդէ, կը միացնէ եւ մասնաւորը՝
ընդհանուրին կը զոհէ: Բազէր կան,
որ այսօր իրենց վնասորները, թնդա-
նօթները և քանձերը կը հանին ի-
րենց ապագայի ապահովութեան հա-
մար. բայց ազգեր եւս կան, որոնք ի-
րենց երկրի ճշմարիտ և հիմնական ս-
թը միայն ազգի անդամներու լուսա-
ւորութեան մէջ կը տեսնեն և ոչ ու-
րիշ տեղ: Սոն զի բազմաթիւ փոր-
ձերով համոզուած են, որ ժողովուրդ-
մը գիտութեան ծաւալմամբ կը մեծ-
նայ և ոչ թէ մարդկային արեան հե-
ղեղներ թափելով: Բնն ազգ և ժո-
ղովուրդ պատերազմ ունի իւր առջեւ
և պարտի ունենալ. վասն զի խաղա-
ղութիւնը և լուսութիւնը այս ուշիւոր-
հէն չեն, բայց երանի այն ազգերուն,
որոց պատերազմը մարմնոց և ուրեան
գէտ չէ, այլ Տգիտութեան և խաաթի:
Քանի զինուոր և նահատակ ունինք
մենք այս պատերազմին համար: Թող
հաշուէ իւրաքանչիւր որ, համեմատե-
ազգի բազմութեան հետ և իոկոյն
կարէ չափել. կռիւ և ճգրտասպէս
սահմանել թէ քնն վիճակի մէջ է մեր
Բազը: Իայց նուազութեամբ պիտի
յուսահատինք. քաւ լիցի. այլ պիտի
ջանանք առաւելու, պիտի պատե-
րազմինք մեր միակ թշնամոցն — Տգի-
տութեան հետ, մատաղ սերունդը
գաստիարակելով և հասարակութեան

մէջ ուղղախոհ և հասուն հրատարա-
կութիւնները բաղմոցընելով, ապա
թէ ոչ ժամանակն տնայաւ է, իւր
տրագիկնոց տոբերուն տակ կ'անշըն-
չացնէ և կը փոշխացնէ իւր անշարժ
զաւակը:

Եւս է ահա մեր համոզումը և ան-
կեղծ խորհուրդը, զոր այսօր նոր առ-
ուցս հետ կը հաղորդենք մեր սիրելի
Բազին: Եւս խորհրդով կըմանենք և
մենք Սոն նոր շրջանին մէջ, քաջալե-
րութեամբ Սեւ, բաժանորդաց, ջանիւք
Ս. Եւթոցս միաբանական ուխտին
և ինամակալութեամբ Բննապատիւ
Ս. Պատիարքին, սրոյ հայրական հա-
ճութեամբ տարուցս սկզբէն իւրաքան-
չիւր ամսական ութամսալ թերթին վը-
րայ կէս թերթ եւս յաւելաւ, այսինքն,
փոխանակ 16 երեսի, Սեւապատիւ
բաժանորդք պիտի ստանան 24 երեսէ
բաղկացեալ Եւթոցս, առանց գնոյն
վրայ յաւելուած մ'ընելու, որ էր Չար-
ճաթ մէջին, ճանապարհի ծախսով,
կախի վճարել:

Իսկ Սոնի ներքին պարունակու-
թեան մասին այժմ բանիւ մեծամեծ
խոստմունքներ չեմք ընելու, այլ կը յու-
սամք ի ժամանակին գործով պատկել
ընթերցող հասարակութեան իղձը:

ՆՇԱՄԵՐՏՈՒԹԻՒՆ

Եւ

ՍՏՈՒԹԻՒՆ

Ով չար, ազգային ստոր գաղտնա-
կալ մի ըլլար, անոր բնակարանը մի
ուրիշ, փան զի ազգայր էտիք ան-
գամ ու խոյ, պիտի կանգնէ. բայց
չարերը ճակողգութեան մէջ պիտի
խնան չոր մարդը բարի փոխճան չու-
նենար, ամբարշտներուն ճրագը պի-
տի մարի:

Սոն:

Եւ

Սողոմոն իմաստունը, այն հռչակա-
ւոր փիլիսոփայն, որ իւր սրբունական

փառաւոր Գահուռն վրայ իմաստասիրա-
կան հետազոտութեամբ կը զբաղէր և
կը քննէր ամեն բան, անշուշտ իւր
անձնական փորձով խելամուտ եղած
ըստ. «Վերջուր թագաւորին առջե-
ւէն ամբարիշտը, և ահա անոր ամբար-
արդարութեամբ կը հաստատուի » :

Վերջ ալ կը կրկնէր դէմէն նոյն
խօսքը, թէ «Վերջուր ժողովրդեան
մէջէն նենգաւորները, և ահա այն խա-
ղաղութեամբ և երջանկութեամբ կար-
գի » : Երբ կը տեսնէ մարդ, այդպիսի
աշխատութիւն, բրախք թափել, ճա-
խաթիւն սպառել և միտք հոգնեցու-
նել ժողովրդեան բարւոյն յառաջողեմ
զարգացման համար, ու երբ անոր ան-
յաջողութիւնը կը տեսնէ, կը քարմա-
նայ և կը ստակայ միանգամայն : Դժե-
կողմէն մի և նոյն ձայնը կը լսէ, մի և
նոյն նարատակի համար գործելու սովե-
քը համակիր կը գտնէ, բայց կը շուա-
րի երբ գործելուն անյաջող կամ հա-
կառակ ելքը կը տեսնէ : Սակայն քիչ
մը խորհելէն վերջը պատճառ մը կը
գտնէ, նոյն պատճառը խախտելու
համար ձեռքէն եկած ջանքը՝ չի խոս-
քը, բայց ՚ի զարմանս և ՚ի յաւ քրտին
անով ալ չըլլար, վերջապէս եթէ ու-
ղիլ դատում և սուր անտութիւն ու-
նի, բռն քրտնառն ու իսկական ար-
գելքը կը գտնայ և տակուսով ետ կը
բաշտի, վասն զի կը հասկընայ որ իւր
ձեռնհասութեանէն վերէ անոր խափա-
նումը, տատի պարտաստեալ և յուսա-
հատ ձեռքը ձախտին դնել և արդալէ
ու հառաչելէ զատ ուրիշ բաժին չու-
նենալը կը հասկընայ և այնպէս քննէ :
Վերջերան մը՝ ետքը իւր գնացումը քրտին
խորհելէն բարձրացող հառաչանայ ձայ-
նին հետ սա վճիռը կը լսուի, «ուր որ
չարելու պատիժ չի կայ, հոն Գեհայ
ապահովութիւն ալ չի կայ » :

Սարգիսն անբխի բարոյականը ժու

ղովուրդին կեանքն է, երբ բարոյակա-
նութիւն աղականուած է, ժողովուրդը
անկենդան դիմէ, այնուհետեւ լոկ
զգայական շարժում և բուսական ա-
ճում և սպառում ունի. այսպիսի դը-
րից մէջ վիճակի փոխադրութիւն կամ
յառաջողական շարժումն յուսոյ
անկողնի է. նա միշտ պիտի դիմէ ոչնչ-
աւթեան : Եթէ կ'ուզեա ժողովուրդը
կենդանացունել, վերցուր անոր մէջէն
վատ կիրքերը, յամառ շարկը, նեն-
գաւոր խաբէութիւնը և ահա միւս
բարեկարգական ջանքերը կ'արդիւնաւոր-
րին, ոգի կ'առնէ այն, վերադարձը թե-
ւեր կը զգենա և կը ձախրէ երանու-
թեան տը խաղաղութեան վերնագա-
ւառին մէջ : Բայց այսպիսի անխրո-
հելէնքն ինչ վիճակի տէր տը լընս
քանի որ կը յաճախեն հառաքակու-
թեան մէջ միշտ վնասակար են ժողով-
րեան բարւոյն : Սխալեման թագա-
ւորէն սկսեալ մինչև վերջին տատնա-
նի քծուծը եթէ վատ բնաւորու-
թեան տէր են՝ միշտ աղետալի ար-
դիւնքնեք յառաջ կը բերեն. բայց սո-
անտրանտի է, որ տատնանքն համե-
մառ շարեայ արդիւնքն ալ անելի կամ
պտիտ կ'ըլլայ : Պարտիզանը իւր բո-
սերն արդիւնաւորելու համար անոնց
պրմաւոր կրծող որդերը ապառելու
կ'աշխատի, հալիւր թը հոտին մէջէն
ախտացեալ ոչխարը մէկդի կը հանէ՝
երբ բժշկելու յոյսը կը կորի, բայց
տակաւին արդար միջոց մը չէ գտնուած
մեր աղդին մէջէն յամառեալ անբոյժ
չորութիւնը փարքը որ ժողովրդեան
բարոյական Գեհայց հիւթը կը սպառէ.
տեսնենք ուրեմն ինչ կ'ընեն և ինչ կը
գործեն այս մարդիկը :

Սկզբնաւոր Գեհայն Գեհայն, իրաւունք, ուղիւն օգտար, գոյեալ գատ մը
յառաջ տանել կ'ուզէ. ինդրոյն ամեն
պարագայներուն անհմտ միտքեր՝ եր

կարժամանակ կը գրասկին երկդու կողմի
փաստերը Գրասկին, երբեմն այս և
երբեմն այն, կողմի վերայ հակած կը
գանձան աղագրութեան կըստն մէտը
այլ ժամանակ կ'անցնի և անձ ինչ
դիրը տարբեր կերպարանք կ'առնու
իրաւանց տէրը կը ճանչցուի, քաղց եւ
ղան եղան կ'ըլլայ : Արդեմ անձնա
կան կիրքէ մը թելադրուած, մէկուն
անձնական պատուոյն կը դպչի և երգ
ղայն պաշտպանող պարտաւոր փաստեալ
կը գիմահարի . կը տնայ աղագրի քաւ
նալ, ներկութեան գիմել, շատ մը
առաք և ինքզինքն գտնա պատմութիւն
ներ և եկեղեցի թիւները յառաջ բե
րելով պարկեշտ անձերու, քաղց և ե
րախոսութեան պատիւն աղագրուել,
յանիրուի, պատգիւր որ ամէն անհատի
նուիրական իրաւունքն է : Եւ պատիւ պա
րագայներու մէջ իրանմութիւնն յաղ
գող պարկեշտը կըտնայուի բուն իրաւ
ւունքէն իսկ զրկուելով . չի մնանաք
ըսելու որ զօրութիւնն չունեցողներն
ալ ենթակայ են այս զրկման, այսինքն ու
նանք որ թէ նիւթական և թէ բաքայա
կան աղագրութի չունին : Եւ արդար մը
ուր իրաւունքը հղորին եր, սուրը, բա
զու կը և փայլուն մետաղը կը յաղկանա
կեր, սակայն այս պնկրուութե և բըռ
նութեան գար կ'անուանի . իմա կ'աղ
բնք այնպիսի գարու մը մէջ ուր կը
կարծենք թէ յամեն անհատական և ըն
կերական իրաւունքները, վայելելու ա
զատութիւնն ունինք . կը կարծենք թէ
անհատականութիւններն յանգամարա
րեղ են : Այլ, ընդհակառակն կը տես
նանք տակաւին որ իրաւունքը հղորին
է, այսինքն լեզուին և գրչին : Այլ, լե
զուն և գրիչը կը գործեն այսօր մեր
մէջ այն ամենը ինչ որ կը գործէր եր
բեմն սուրը և ոսկին, և սակայն այս
գարս մեր ազգին համար քիչ կ'անուա
նի : Եւ արտադրութեան քար

Ըստ ըստ, և չ'ընդունինք աղագրու և որ
այս գարը բերած լուսաւորութե նշող
մը, այլ չենք կրնար տեսնալ նաև որ ա
նք հետ մէկանդ յորդեցին խառն
բաղմութե շատ մը չարիք, կը հաւա
տանք որ այս փորրիկ նշողը բազմութիւ
դիմակներ, վար առաւ, այլ կը շօշա
փենք նաեւ որ իւր գեղեցիկ անուան
դիմակին լոսկ պահուող խիստ շատ
հրէշներ ալ երեւցուց, որք կրնան այ
սօր քանի կերպարանքի մէջ մոնել և
ուրաւ ասանին իրենց պէտք եղած
կերպին փոխուիլ . սակայն հոգ չէ, վա
րն զի այն կրնինք պատրուակաւ չէ,
այլ աղագրութեան և լուսաւորու
թեան պատրուակաւ : Եւ այլ միթէ յան
ցանք քաղաւ համար միայն պէտք է
կրծագմարութիւնն ըլլայ միթէ անձնա
մարութիւնը յանցանք չէ, միթէ նոյա
տակի մը համար (թէ և իրաւացի) իրա
ւունք մը ժառանգ ճամարութեան խա
տարիլ և աղագրութիւնը թիւրեղ ու
ճիր չէ, ուր . . . ինչպէս և փոսն զի կը
նից պատրուակաւ չէ . . . :

Եւ այլ թիւ այն որ առաքինութեան
կերպարանքով մարութիւնն գործեց և
արդարացաւ : Եւ առաւոր մը կայ, ու
րուն առջեւ արգարտնալու համար,
մէք քահնուր կ'ապագութիւն կայ, այն է
ժաղվարդը և թէ զայն խաբէրու կ'ա
րեւցանէր յաջող մէկը, կայ ուրիշ
մը և այն է պատմութիւնը, որն որ լը
սանդ կ'ապագայութե և հատարակաց գա
ւին կը յանձնէ, և թէ ասոր աջքին
փարագը քաղենք, անպին իրիշը իւր
հարուածները կը շարունակէ . բայց եւ
թէ այս ալ թմրեցունելու չար յան
գործնաւ ըլլանք, կայ ուրիշ մը, մէհա
գոյն գատաւոր մը, յամառեալին հա
մար անողորելի իշխան մը, ճամարութե
թիւնը անպաւա ալ բովարդարութե
մէք ժամդիր ասորը պատմութե հակե
և քր մը, թէ աւել և թեմ կ'անուա
նի : Եւ արտադրութեան քար

ւումը կ'որոշէ, և անիրաւին արդար հատուցումը կուտայ: Երբէք թող չըսէ մէկը թէ «խաբեցի և շահեցայ», ընդհակառակն թող վախնայ որ արդէն ունեցածն ալ չի տուժէ. «Սնուկ էի ես և ծերացայ, և արդար արհամար հուած չը տեսայ, և ոչ ալ անոր զաւկին հասց մուրալը»:

Ի.

Իսնականութիւնը, այս վաեմուկան յատկութիւնը մարդուս որաւած է, ոչ որպէս զի վայրենի վարագնէրու պէս իւր նմանին գիշատէ, այլ որպէս զի միմեանց օգնական ըլլայ: Եւս պայծառ ջահը տալաւորած է գերագոյն Տէրը, արեղերաց արարչապետը, ոչ որպէս զի անասական կրից աւաջնորդ ըլլայ, այլ որպէս զի ընկ նմանակցութե օիրովը վառուած առաքինութեան, ալ գարութեան ու ճշմարտութեան, կամ թէ ճշմարիտ բարոյն և գեղեցկին թելադրիչ և դորձագիրն ըլլայ: Եւսց մըր է մարդոյն այս սահմանը, մարդուն ճշմարիտ ազատութեան միայլ ըմբռնումը՝ որ աստիճան խոտորել առած է զմարդ իւր բռն սահմանէն, որչափ հեռացուցած է իւր իսկական վախճանէն, և այս ոչ միայն ի միսս հասարակութեան, այլ և ի մեծ միտս իւր անձին: Եւսասարգութեան անուանեալ դուրուս մէջ մեծաքայլ յառաջ կ'երթանք, բայց մըր, — գէպ ի սպականութեան և եղծման գուբը. ինչ ճանապարհով, մոլութեան և անիրաւութեան ճանապարհով: — Ինչո՞ւ չենք խրատուիր. վաւրն զի անձաւք փորձել կ'ուզենք. մի թէ հաղարուս փորձեր մեզ բաւա կան դատարարակ չեն — ոչ — ինչո՞ւ, վաւրն զի անձաւք մեր անձէն դուրս են: Եւսց ափսոս չէ՞ մեր անձին ալ, զոր մեր ձեռքով թշուառութեան կը մատ-

նենք. — հոգ չէ՞, մենք այն մեծատու նին կը նմանինք՝ որ իւր եղբարց ուղղութեան համար մեռելներէն մէկը կ'ուզէր խրկել անոնց:

Ինչո՞ւ մարդկութիւն, չենք ըսեր որ այսպէսով ետ կ'երթանք և կը հառնինք մարդկան զեղծեալ դարուն սկիզբը. բայց մինչև հոն հասնելիս առ շաբերեալ գեռ չսկսած՝ մենք զմեզ պիտի գտնանք մահաւն անողորմելի ճիւղաներուն մասնաւոր, ուզենք պիտի մեր յարգին ըսել որ այս ճամբուն չի բռնէ, բայց չի պիտի կրնանք համոզել, քանզի այն ալ փորձել պիտի աւգէ, և անս այսպէս կ'երթանք, կը քաղենք և կը խալաւք թէ յառաջ կ'երթանք: այն կ'երթանք հոն՝ ալ որ մեր անբանական կիրքերն զմեզ կը ծղեն:

Եւսոր ճշմարտութիւն մը կը խաւտովանի մէկը, բիւ մը ատենէն ետքը դարձուածները ուրիշ կերպի կը փոխվին և նոյն այն ճշմարտութիւնը, զոր բիւ մը յառաջ խաւտովանեցաւ, հիմա անոնց կարմիրու կը ժխտէ և անոր հակառակն հաստատելու կ'աշխատի. աւրիշին խօսքերը կը խորժէ, բայց իւր խօսքերը չի ըսեր, աւրիշին սկզբունք կը քարոզէ, և ինքը իւր պաշտած սկզբան գէտ կը գործէ. շահամուկութիւն կ'աւտէ, կը նստատէ ունաց վրայ, իսկ իւր ամենափորքիկ շահուն համար ալ գարութիւնը կը քողարկէ, իրաւունքը կը ժխտէ, այսու ամենայնիւ տրամաբանութեն և խղճի վկայութեամբ խօսած կ'ըլլայ: Եւսորով ճշմարտութեան գլխով կը պարզէ եւ անոր շարունակէ գունովը աչբեր կը զօշտուէ, և վերջը բռն արդիւնքով անոր սեղ ռեւ ստուութեանց ծուէններ կը ներկայացունէ, հասարակաց շահուն պաշտպան կը հանդիսանայ, և հոն նախ իւր շահերը ապահովել կ'աշխատի նոյն իսկ հասարակաց միասովը, այսու ամենայնիւ

տակաւին նոյն հասարակութիւնը իբր
տպաշնորհ ամբաստանելու ամարդու
թիւնը կ'ունենայ : Հանդիսաւոր կ'ըլլայ
և յանդիսըր ուրանալու համար արդա
րդ կը դատապարտէ . որով ինքն ար
դարանալու տեղ եղեռնագործ մը կ'ըլ
լայ տեսնալ աչքերու առջեւ , երբեք
չիշէր որ մարդկային ազատութեան
հիմնագիրը , այն արդարութեան պաշտ
պան , սիրայ և ճշմարտութեան գե
րագայն վարդապետը , այն մարդկային
գերութեան անտանելի շղթայն խոր
տակող Յիսուս Փրկիչը սոսկալի դա
տապարտութեան ենթարկեց ճշմար
տութեան թշնամին , և ներսմը յա
ւիտենական արգելքի տակ փակեց :
« Թող չընեղուիքսաւ , — ոչ հոս եւ
ոչ հանդերձեալին մէջ :

Գ .

Ստուգիւ այս ամենը կ'ըլլան , բայց
ասոնց վրայ ժողովուրդը . քննչի լինէ .
յայտնի է որ երկու սուրին մէջ տատա
նեալ պիտի մնայ , ժողովուրդը այս պա
րագայիս մէջ կը նմանի հանդարտ լծա
կի մը , ուր եթէ քար մը ձգենք կը սկսի
ծածանիլ , և այն շարժող ալիքները կը
սկսին դիմել դէպ ի եզրը . հոն եթէ
ուրիշ քար մ'ալ և յաջորդաբար քարեր
ձգենք , ալիքներն իրար կը խառնուին
և կը կազմեն երկար յուզում մը , ժա
մանակ մը տատանելէն վերջը լծակը կը
հանդարտի առանց իւր մէջ նշան մը
ձգելու , այսպէս ալ ժողովուրդը :
Խնդիրները կը յուզեն զինքը , հակա
ռակ կարծիքներու ալիքները միմեանց
կ'ընդհարին և նորանոր ալիքներ կը յա
րուցանեն , եղբակցադութեան կը գի
մեն , հոն կը բաղխին և ետ կը դառնան ,
վերջապէս առանց երկու կողմի նախա
դասութեանց իմաստին հասու ըլլալու
խումբ մը այս խումբ մ'ալ այն կողմը

դատար կուտայ իւր տատանմանց ,
քարը ձգողը արգէն իւր նպատակին
հասած է : Ստուգիւ , ժողովուրդը ան
արարեղծ ոյժ մի է , բայց երբ գործելու
համար մեկտեղ պայ , բաժանեալ եղած
ատեն խիստ ուկար է : Տուներու , պան
դոկներքու և արձարաններու անկիւն
ները շատ խորհուրդներ կ'ըլլան , բայց
այն ամենը մասնաւորներ կը համար
ուին , իւրաքանչիւր խումբ իւր հա
մալման վրայ կը խորհի , կը խօսի , և կը
պնդէ , երբեմն ալ կը բողբոքէ . ասկայն
կը շատի երբ երկու կողմի փղջուրը
քննելու կ'ենլայ , վստն զի կը տեսնայ որ
երկուքն ալ մի և նոյն սկզբուկըր ա
ռած և իբրեւ զրոհ անով սպասազի
նած ասպարէզ նետուեր են , երկուքն
ալ մի և նոյն ճամբով քարելու խու
տումն կ'ընեն , այսինքն՝ իրաւանց ,
արդարութեան եւ ճշմարտութեան
ճամբով . բայց ասպարէզին մէջ անոնց
ներհակ շարժումները կը տեսնայ , քա
րերու մէջ հակառակութիւն կը նշան
ուէ , և կանկ կ'արեւու վայրկեան մը . կը
շափէ , կը ձեւէ . ասկայն եթէ կազպա
րի մը չի կրնայ յարմարցնել , ինչ պի
տի ընէ . — ոչ ինչ , ինչու պէտք է պիտի
բռնէ և ետ քաշուի : Եւս մէկ մասն է
պունն կ'ընենք անտարբեր և որուն չըլ
լալը ըլլալէն նախապատիւ է , ասկէ զտո
կայ գլխաւոր երկու մաս ալ , որ հետա
քրքրութեամբ կը զննեն , բայց տար
բեր գիտակներով , կը նկատեն կը քն
նեն և երկուքն ալ այնպէս կը համա
րին որ գաղտնեաց խորը թափանցե
լով , հոնկէ քաշեցին դուրս հանե
ցին պահաւած ճշմարտութիւնը . բայց
յայտնի է որ ճշմարտութիւնը մէկ է ,
երկուքն ալ կ'արձանագրեն իրենց գի
տը յանուն ճշմարտութեան , և ահա
հոս կը յղանայ պատմութիւնը , պատ
մութիւն մը՝ որ ապագայ միտքերը պի
տի յօգնեցունէ և մեր այս գարը խան

2